ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ք. Իջևան «3» 01 2024թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի, որը գործում է ԵՊՀ ԻՄ կանոնադրության հիման վրա, և «Մունետիկ» մշակութային հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ «Մունետիկ» ՀԿ), ի դեմս նախագահ Հ. Համբարձումյանի, որը գործում է «Մունետիկ» ՀԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Համաձայնագրի առարկան Կողմերի համագործակցության նպատակի, գործընկերության հիմնական ուղղությունների սահմանումն է:

1.2. Կողմերը, համապատասխանաբար կնքելով սույն համագործակցության համաձայնագիրը, ամրագրում են սահմանված նպատակին հասնելուն ուղղված իրենց պատրաստակամությունը:

1.3. Սույն Համաձայնագիրը միջոցների հատկացման պարտավորագիր չէ: Այն ցանկացած Կողմի համար օրենքով պարտադրվող պարտավորություն չի համարվում, կամ իրավունքներ չի տրամադրում որևէ այլ Կողմի համար:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Հիմք ընդունելով նախորդ տարիների հաջող համագործակցությունը՝ Կողմերը համաձայնում են համագործակցել 2024թ.-ին նախատեսվող՝ ՀՀ Տավուշի մարզի Գետահովիտ գյուղում և Տավուշի շրջակա պատմամշակութային վայրերում կայանալիք՝ «Հայրենիքն իմ աչքերով» խորագրով հայրենաճանաչությանը միտված ծրագրին՝ պատրաստակամ լինելով համագործակցել ծրագրի բոլոր փուլերում:

Համաձայնագրի նպատակը Կողմերի միջև գործընկերային հարաբերությունների հաստատումն է, համագործակցության ծրագրի իրականացումը՝ Համաձայնագրի 2.2. կետում նախատեսված երեք փուլերով:

2.2. Կողմերի համագործակցությունն իրականացվում է հետևյալ փուլերով.

2.2.1. Առաջին փուլում նախատեսվում է կազմակերպել «Հայրենիքն իմ աչքերով» ծրագրի կազակերպիչների հանդիպումը մոտ 100 ուսանողների հետ՝ ծրագրի էությունը և ծրագրով նախատեսված գիտելիքները փոխանցելու համար.

2.2.2. երկրորդ փուլում ծրագրի կազմակերպիչներին ներկայացնել ԵՊՀ ԻՄ-ի կողմից ընտրված այն երիտասարդներին, ովքեր կմասնակցեն ծրագրի բուն միջոցառումներին.

2.2.3. երրորդ փուլում ԵՊՀ ԻՄ-ն պատրաստակամ է մի քանի օրով տրամադրել համալսարանի համապատասխան սրահներից մեկը՝ ծրագրի ընթացքում ստեղծված աշխատանքների ցուցադրության համար:

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Կողմերը պարտավոր են առաջնորդվել համագործակցության հետևյալ հիմնական սկզբունքներով.

- փոխադարձ վստահություն,
- պատասխանատվություն,
- պարտաճանաչություն,
- որակի վերահսկում
- փոխըմբռնում և փոխզիջում,
- թափանցիկություն,
- համագործակցություն:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է 2024թ. ընթացքում:

4.2. Սույն Համաձայնագրի ցանկացած փոփոխություն կատարվում է գրավոր և դառնում նրա անբաժանելի մասը:

4.3. Համաձայնագիրը կարող է դադարեցվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, մյուս Կողմին առնվազն 30 օր առաջ գրավոր տեղեկացնելու պայմանով:

4.4. Սույն Համաձայնագրի վերաբերյալ Կողմերի միջև ծագած անհամաձայնություններն ու վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով:

4.5. Սույն Համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից՝ հայերեն լեզվով:

4.6 Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ Հասցե՝ ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, Ուսանողական 3 **Տնօրենի պաշտոնակատար՝** **Ա.Մակարյան** Կ.Տ.	«Մունետիկ» ՀԿ Հասցե՝ ՀՀ, Երևան, Ռաֆֆու փող., 35 շենք (Մալաթիա-Սեբաստիա վարչ. շրջան) **Նախագահ՝** **Հ. Համբարձումյան** Կ.Տ.